

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY



# FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS  
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department  
of Romance and Germanic Philology, Yerevan State University,  
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**  
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**  
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**  
Doctor of Philology, professor of Moscow State University,  
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**  
Doctor of Philology, Institute of English Philology, Munich  
University, Germany
- Charles Hall**  
PhD, associate professor of Applied Linguistics, University of  
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**  
Dean of the Department of Romance and Germanic Philology,  
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**  
Doctor of Philology, professor  
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**  
Head of Translation Chair,  
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**  
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**  
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**  
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: [english@ysu.am](mailto:english@ysu.am), [margaret.apresyan@mail.ru](mailto:margaret.apresyan@mail.ru)

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել  
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը**

**Գլխավոր խմբագիր՝**

**Մարգարիտա Ապրեսյան**

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.  
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական  
խորհրդի**

**Դորա Մաքսյան**

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

**պատվավոր անդամներ՝**

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

**Սվետլանա Տեր-Մինասովա**

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

**Հանս Մաուեր**

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի  
համալսարան

**Չարլզ Հոուլ**

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

**Խմբագրակազմ՝**

**Մամվել Աբրահամյան**

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

**Յուրա Գաբրիելյան**

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

**Կարո Կարապետյան**

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի  
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

**Ալբերտ Սակարյան**

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

**Ելենա Միխայրյան**

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

**Համիկ Բաղդասարյան**

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

<b>Avagyan N., Bagiryan D., Melkonyan R.</b> THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND LEARNING PROCESSES .....	8
<b>Avetikian M.</b> TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES: TEACHER DEVELOPMENT .....	18
<b>Абрамян С.</b> ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА .....	30
<b>Амирян Н.</b> ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ .....	41
<b>Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д.</b> ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА (НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ) .....	50
<b>Тер-Саргсян Л.</b> ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА .....	67
<b>ԱԹՈՅԱՆ Լ.</b> ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ .....	78

**Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.**  
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ..... 89

**Գրիգորյան Շ.**  
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ  
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ..... 101

**Մարտիրոսյան Մ.**  
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 111

**Մինասյան Է.**  
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ  
ՄԱՄՈՒԼՈՒՄ ..... 120

**Սարգսյան Լ.**  
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ  
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ ..... 134

**Ոսկանյան Ա.**  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ..... 149

**Սարգսյան Լ.**  
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ  
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ ..... 162

## ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

### ABSTRACT THE CONTENT AND IMPLICATIONAL CHARACTERISTICS OF RELIGIOUS CONCEPT

The article considers the content and implicational characteristics of the religious concept from the viewpoint that the concept is the unit of mentality. Contrary to the traditional method that deals with the linguistic thought only, the concept approach provides an opportunity both to consider and teach the units of cognitive thinking. Several definitions to “concept” are given in the article that enables us to introduce clearly the word-concept correlation, the implicational and intentional fields of the concept and the conceptions acting in the mentioned fields. Thus teaching of religious sublanguage via the concept approach will enable to organize simultaneous teaching of language, mentality and culture of the native speakers.

**Key words:** *concept, concept approach, implicational, intentional, associative field, word-concept correlation conception, religious sublanguage, concept structure.*

### РЕЗЮМЕ КОНТЕНТНЫЕ И ИМПЛИКАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ РЕЛИГИОЗНОГО ПОДЪЯЗЫКА

В статье рассматриваются контентные и импликационные особенности концепта, так как концепт является единицей менталитета. Вопреки традиционной методике, которая изучает только единицы языка, когнитивный подход позволяет также изучать единицы менталитета. В статье приведены дефиниции “концепта”, которые четко определяют соотношение “слово-концепт”, импликационные и интенсиональные поля концепта, а также концепции, действующие на этих полях. Таким образом, обучение религиоз-



ному подъязыку подразумевает одновременное обучение языку, мышлению и культуре носителей языка.

**Ключевые слова:** концепт, концептуальный подход, импликационал, интенсионал, ассоциативное поле, концепция, религиозный подъязык, структура концепта.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է հասկացույթի բովանդակային և գործառական բնութագրերը, քանի որ հասկացույթը մտածելակերպի /մենթալիտետի/ միավոր է: Հասկացութային մոտեցումը, ի տարբերություն ավանդական մեթոդիկայի, որը գործ ունի լեզվական գիտակցության հետ, օգնում է ուսումնասիրել և յուրացնել ճանաչողական գիտակցության միավորները: Հոդվածում տրված են հասկացույթի կառուցվածքի մի քանի սահմանումներ, որոնք հստակորեն ներկայացնում են բառ-հասկացույթ հարաբերակցությունը, հասկացույթի միջուկային և զուգորդական դաշտերը և այստեղ գործող հասկացությունները: Հասկացութային մոտեցմամբ անգլերեն կրոնական ենթալեզվի ուսուցումը ենթադրում է լեզվի, գիտակցության և մշակույթի միաժամանակյա ուսուցում:

**Բանալի բառեր՝** հասկացույթ, հասկացութային մոտեցում, իմպլիկացիոնալ, ինտեսիոնալ, զուգորդական դաշտ, բառ-հասկացույթ հարաբերակցություն, հասկացություն, կրոնական ենթալեզու, հասկացույթի կառուցվածք:

Հասկացույթը, ըստ ճանաչողական մոտեցման, գիտակցության, մտածելակերպի /մենթալիտետի/ միավոր է: Այդ համատեքստում բառի նշանակությունը լեզվական գիտակցության արդյունք է: Փաստորեն, ավանդական մեթոդիկական գործ ունի լեզվական գիտակցության հետ, իսկ հասկացութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել և յուրացնել ճանաչողական գիտակցության միավորները:

Ասվածը ավելի ակնառու ներկայացնելու համար, համեմատել ենք հասկացույթի մի քանի սահմանումներ, որը հնարավորություն կընձեռի հստակորեն ներկայացնել բառ-հասկացույթ հարաբերակցությունը, անցումը բառից դեպի հասկացույթ, ինչպես նաև այն, թե ինչպես են


փոխվում մեթոդական մոտեցումները վարժությունների և տեքստերի ընտրության նկատմամբ հասկացութային մոտեցման կիրառման պարագայում:

Ս. Գ. Վորկայշովը հասկացույթի մեջ առանձնացնում է հասկացական բաղադրիչը /հատկանիշային և սահմանող կառուցվածք/, պատկերային բաղադրիչը /ճանաչողական փոխաբերություններ, որոնք պահում են հասկացույթը գիտակցության մեջ/, նշանակության բաղադրիչը /հասկացույթի ծագումնաբանական, զուգորդական բնութագրերը, որոնք որոշում են նրա տեղը լեզվի բառային-քերականական համակարգում/ (Воркачев, 2004: 7):

Սույն կաղապարն օգնում է բացահայտել բառային և հասկացութային մոտեցման տարբերությունները և ընդհանուր կողմերը: Ակնհայտ է, որ հասկացույթի պատկերային բաղադրիչը, ըստ ավանդական բառապաշարի ուսուցման հարացույցի, հաշվի է առնվում ինպիցիտ, ոչ բացահայտ, քանի որ փոխաբերությունները դիտարկվում են բառերի բազմիմաստության, հոմանիշության, ոճական տարբերությունների բացահայտման համատեքստում:

*Գծապատկեր 1*

Հասկացույթի հիմնական բաղադրիչները ըստ Վորկայշովի



Վ. Ի. Կարասիկը դիտարկում է հասկացույթի կառուցվածքը իմաստաբանական և արժեբանական տեսանկյուններից: Նա առանձնացնում է հասկացույթի մեջ պատկերային-ընկալողական, հասկացական /տեղեկատվական-փաստագրական/ և արժեքային բաղադրիչները /գնահատական և վարքագծային նորմեր/ (Карасик, 2004: 118): Սույն մոտեցումն ավելի շատ է շեշտադրում հասկացութային և բառային մոտեցումների տարբերությունները, քանի որ բառային մոտեցման դեպքում արժեքային բաղադրիչը կարող է հանդես գալ միայն ներակա:

Հասկացույթի հիմնական բաղադրիչներն ըստ Կարասիկի



Մ. Վ. Նիկիտինն առանձնացնում է հասկացույթի մեջ պատկերը, հասկացությունը և ճանաչողական և գործարանական իմպլիկացիոնալները (Никитин, 2004: 53-56):

Ինչպես հայտնի է լեզվաբանությունից, «հասկացույթը» իմացական լեզվաբանության հիմնական կարգն /կատեգորիա/ է: Հասկացույթը հնարավորություն է տալիս ուսումնասիրել լեզվի, գիտակցության, գիտակցության և մշակույթի, մարդու մենթալ առանձնահատկությունների կապը, որը արտացոլվում է ազգային լեզվում (Пименова, 2004: 87):

Լեզվական միջոցների այն ամբողջությունը, որը առարկայացվում է հասարակության զարգացման որոշակի փուլում, սահմանվում է որպես հասկացույթի անվանողական դաշտ: Անվանողական դաշտը տարբերվում է լեզվաբանության մեջ առանձնացվող բառապաշարի խմբերից՝ բառաիմաստային խմբից, բառաիմաստային դաշտից, հոմանիշային շարքից, բառադարձվածաբանական դաշտից, զուգորդական դաշտից նրանով, որ այն ունի համալիր բնույթ և ներառում է բոլոր նշված խմբերը (Попова, 2007: 314):

Ցանկացած կրոնական հասկացույթի բովանդակային բաղադրամասերի վերլուծությունը հաստատում է ասվածը: Օրինակ՝ «faith – հասկացույթը մեծ հաճախականությամբ գործածվող բառ է տարբեր բառաշերտի ոճերում և նրա հոմանիշներն են *trust, confidence, belief* բառերը:

Faith հասկացույթն ուսուցողական նպատակներով կիրառելն արդյունավետ է այն առումով, որ այն ներառում է վերը նշված բառային խմբերը: Այն նշանակում է հավատ Աստծո հանդեպ, խորը հավատի զգացում (a strong feeling of trust or confidence in someone or something; belief and trust in God):

Առօրյա-խոսակցական մակարդակում ուսանողները դժվարությամբ են տարբերակում նշված հասկացույթի զուգորդական դաշտում գործառնող այլ հասկացությունները: Ակնառու օրինակ է trust հասկացությունը, որը նշանակում է կայուն վստահություն ինչ որ բանի նկատմամբ (a strong belief in honesty, goodness; to believe that someone is honest or will not do anything bad or wrong; to be sure that something is correct or right) այն առումով, որ այն ներկայացնում է «հավատ» և «վստահություն» հասկացությունները, որոնցից երկրորդը «Faith» հասկացույթի իմաստային դաշտում «միջուկային» իմաստից բավականին հեռու է՝ այսպես ասած՝ «սահմանամերձ»:

Confidence հասկացությունը նշանակում է վստահության զգացում ինչ-որ բանի, ինչ-որ մեկի նկատմամբ/հանդեպ (the feeling that you can trust someone or something to be good, work well, or produce good results; the belief that you have the ability to do things well or deal with situations successfully):

Belief հասկացությունը նույնպես հավատի հոմանիշ է՝ զգացում, որ ինչ-որ բան բացարձակ ճշմարտություն է (the feeling that something is definitely true or definitely exists; the feeling that something is good and can be trusted; an idea that you believe to be true, especially one that forms part of a system of ideas):

Համապատասխան վերլուծությամբ լեզվաբանները պարզել են, որ նշված հասկացություններ ներկայացնում են *faith* հասկացույթի միջուկային դաշտի տարբեր չափումները:

Անզլախոս լեզվակիրը տվյալ հասկացույթին առնչվող /իմաստային և զուգորդական մակարդակներում/ առածները, առակները, տարբեր ասույթները գործածում է իր խոսքում, անկախ այն բանից նա լեզ-

վարան է, թե ոչ: Նույն հասկացույթը ներկայացնում է բազում առաձևեր, ասույթներ և այլն՝

*Faith is like radar that sees through the fog. – Corrie Ten Boom*

*Faith is the art of holding on to things your reason has once accepted in spite of your changing moods. – C.S. Lewis*

*Faith is to believe what you do not see; the reward of this faith is to see what you believe. – Augustine*

*Take the first step in faith. You don't have to see the whole staircase, just take the first step. – Martin Luther King, Jr.*

Jesus turned, and seeing her he said, “Take heart, daughter; your faith has made you well.” And instantly the woman was made well. ~Jesus the Messiah (Matthew, 9:22) (<http://www.whatchristianswanttoknow.com/21-amazing-faith-sayings/#ixzz3CNNvduIg>).

*Faith* հասկացույթի գուգորդական դաշտում կարելի է հանդիպել բազում միարմատ բառեր՝ բայեր, ածականներ, մակբայներ: Դրանց ուսուցումը էլ ավելի արդյունավետ է դառնում, երբ դրանք ներմուծվում են կոնկրետ խոսքային իրադրությունում կամ համատեքստում՝ ըստ դրանց կիրառման ռճաժանրային առանձնահատկությունների:

Ուսանողները հեշտությամբ են յուրացնում *to believe, to trust, to confide* բայերը, *faithful, trusty, trustful, trustworthy, believable, confident* ածականները, *trustily, faithfully, believably* մակբայները: Սակայն, երբ նրանք սովորում են դրանք առաձևերի կամ առակների միջոցով, յուրացումն ավելի է հեշտանում, օրինակ՝

*Put your trust in God but exert yourself* - Աստծո վրա հույսդ դիր, բայց ինքդ էլ գործիր

*On trust* – պարտք տալ, ապառիկ տալ

*Relationships built on trust* - վստահության վրա հիմնված հարաբերություններ

*To sell or buy goods on trust*- Ապառիկ գնել կամ վաճառել

*Take smb. on trust* -վստահել ինչ-որ մեկին

Արդյունավետ է ներմուծել տվյալ հասկացույթից ածանցված բառերը, թե իմաստային, թե ձևաբանական մակարդակներում՝ *confidentiality, believability, faithfulness, reliance, self-sufficiency, self-assurance, smugness, certitude, certainty, conceit, aplomb, opinion, religion, hope*:

Նպատակահարմար է նաև տվյալ հասկացույթի ճանաչողական հատկանիշներ արտահայտող ածականների հետևողական ներմուծումը և յուրացումը՝ *absolute, great, enormous, boundless, total, deep, profound, strong, steadfast, enduring, firm, unshakable, irresistible, persistent, fanatic*:


Հասկացութային մոտեցման արդյունավետությունը հիմնավորվում է նաև նրանով, որ ուսանողները սովորում են ոչ միայն տվյալ հասկացույթի միջուկային, մերձակա, այլև հեռակա կամ միջուկից հեռու գտնվող բառերը՝ *true, loyal, constant, attached, dependable, honest, straight, honorable, firm, incorruptible, sure, staunch, unwavering, devoted, unswerving*:

Լեզվաբանության մեջ իմպլիկացիոնալը մեկնաբանում են որպես գուգորդական դաշտ, ի հակադրություն ինտեսիոնալի, որը կազմում է հասկացույթի միջուկը: Մեթոդական նպատակներով կարևոր է այդ հասկացությունների մեկնությունը, քանի որ կրոնական հասկացությունների ուսումնասիրությունը ավելի շատ վերաբերում է գուգորդական դաշտին և ոչ թե հասկացույթի միջուկին: Այստեղ խոսքը վերաբերում է տարբեր ճանաչողական հասկացությունների յուրացմանը, որոնք գուգորդվում են նույն հասկացույթի տիրություն: Չնայած լեզվաբանները աշխատում են հասկացույթը չկադապարել, հաշվի առնելով ինտեսիոնալի և իմլիկացիոնալի հարաբերակցության շարունակական փոփոխությունը, նպատակահարմար է հասկացույթների տեսակների դասակարգումն օգտագործել առաջին, բառ-հասկացույթ հարաբերակցությունը ներկայացնելու համար, երկրորդ. հասկացութային մոտեցման նպատակահարմարությունը հիմնավորելու համար: Լեզվաբանները առանձնանցնում են հասկացույթների հետևյալ տեսակները՝ զգայական

պատկեր, սխեմա, հասկացություն, պատկերացում, պրոտոտիպ կամ նախատիպ, ֆրեյմ, սկրիպտ և գեշտալտ (Стернин, Попова: 2003):

Ակնհայտ է, որ բառի մակարդակում այդ հասկացությունները գործուն չեն: Համապատասխանաբար, կրոնական հասկացությի ուսումնասիրությունը բերում է նշված հասկացությունների յուրացման լեզվական մակարդակում: Օրինակ՝ *Աստված* հասկացությը հայերեն և անգլերեն լեզուներում կարող են գուգորդել նույն և տարբեր զգայական պատկերներ:

Գծապատկեր 3.



Հասկացությային մոտեցմամբ անգլերեն կրոնական ենթալեզվի ուսուցումը ենթադրում է լեզվի, գիտակցության և մշակույթի միաժամանակյա ուսուցում, քանի որ հասկացությը համարվում է մտածելակերպի միավոր, որը կիրառվում է նշված ոլորտներն ուսումնասիրելու համար (Карасик, Слышкин, 2001: 75):

Հասկացությի զգայական բաղադրիչը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրության առարկա դարձնել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են կրոնը, եկեղեցին, Աստվածաշունչը, որոնք ընկալման մակարդակում տարբեր մարդկանց մոտ տարբեր մեկնաբանություններ ունեն:

Դրա հետ մեկտեղ Ս. Վ. Կուզյակինը նույնացնում է հասկացությը և բառը, առ այն, որ «հասկացությը ներառում է բառայիններ, որոնց նշա-

նակությունը ներկայացնում է ազգային լեզվական գիտակցության բովանդակությունը» (Кузлякин, 2005: 172):

Հաշվի առնելով ներկայացված մոտեցումները կարելի է եզրահանգել, որ միայն կրոնական բառապաշարի ուսուցումը կազմակերպելով հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ ուսանողները կարողանան հանգամանորեն ուսումնասիրել անգլախոս եկեղեցիականների, ինչպես նաև հավատացյալների գիտակցությունը և մշակույթը: Դա ենթադրում է նախ և առաջ համապատասխան գեղարվեստական գրականության, մամուլի ընթերցանություն ոչ միայն անգլերեն, այլև հայերեն լեզուներով: Ուսանողները պետք է հնարավորություն ունենան համեմատել, հակադրել, վերլուծել հայկական և անգլիական եկեղեցակրոնական իրողությունները:

Ամեն մի մոդուլի շրջանակում հստակորեն պլանավորվում է համապատասխան գրականության ընթերցանությունը հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն ընթերցանությունն օգնում է ժամանակ շահել, քանի որ անգլերեն դժվար տեքստերի ընթերցանությունը շատ ուսանողների մոտ վերածվում է բառարանի հետ յուրահատուկ աշխատանքի: Հատկանշական է այն, որ ուսանողները սիրում են ընթերցանության ժամանակ նոր բառեր դուրս գրել, անգամ սերտել: Այդպիսի աշխատանքը էքստենսիվ, դանդաղ, ժամանակատար է և ընդհանուր առմամբ չի զարգացնում ուսանողների հենքային, հանրամշակութային գիտելիքները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Воркачев С.Г.** (2004), *Счастье как лингвокультурный концепт* М.: ИТДГК «Гнозис», с. 7
2. **Карасик, В.И.** (2004), *Языковой круг: личность, концепты, дискурс / В.И. Карасик. – М.: Гнозис, с. 118*
3. **Никитин М.В.** (2004), *Развернутые тезисы о концептах// Вопросы когнитивной лингвистики. Тамбов: Общ.обществ.org.РАЛК, № 1 (001), С. 53-56.*



4. **Пименова М.В.** (2004), Душа и дух:особенности концептуализации. - Кемерово: ИПК «Графика», с. 87
5. **Попова З.Д.** (2007), Стернин И.А. Когнитивная лингвистика. М.: АСТ: Восток-Запад, с. 314
6. (<http://www.whatchristianswanttoknow.com/21-amazing-faith-sayings/#ixzz3CNNvdulg>)
7. **Попова З.Д., Стернин И.А.** (2003), Очерки по когнитивной лингвистике. - Воронеж: Изд-во "Истоки".
8. **Карасик В.И. Слышкин Г.Г.** (2001), Лингвокультурный концепт как единица исследования // Методологические проблемы когнитивной лингвистики: Сб. науч. тр. / Под ред. И. А. Стернина. - Воронеж: ВГУ, С. 75
9. **Кузлякин, С.В.** (2005), К вопросу о толковании понятия концепт в современной научной парадигме / С. В. Кузлякин // Русистика и современность: в 2 т. Т. 1. — СПб.: Петерб. Востоковедение, С. 172